ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՆՍԾՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-20/3/1»

ք. Երևան «01» «04» 2020 թ.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մոնտալ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Հովսեփյանը, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 894,220 (ութ հարյուր իննսունչորս հազար երկու հարյուր քսան) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի

կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ	«Մոնտալ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68	Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, գ.Հովտաշատ, Բաղրամյան փ. 85 տ
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ	Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 163518012543	ՀՀ 1570027106870100
ՀՎՀՀ 02602449	ՀՎՀՀ 04426977
Գործադիր տնօրեն՝	Տնօրեն՝
---------- Ա.Աբրահամյան	---------- Ա. Հովսեփյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1

«01» «04» 2020 թ. կնքված N «ՆՍԾՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-20/3/1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ
1	18421130	Ձեռնոց տնտեսական	Տնտեսական ձեռնոց, ռետինե ամուր, չափը՝ M	զույգ	350	15	5250
2	19211200	Բամբակյա կտոր	Կտոր բամբակյա, առանց մազմզուկների, 1 հատի լայնությունը 120 սմ, երկարությունը 1 մ	քմ	1400	15	21000
3	19641000	Պոլիէթիլենային պարկ, աղբի համար 35լ	Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար, ծավալը 35 լ. տուփում 30 հատ	հատ	25	390	9750
4	19641000	Պոլիէթիլենային պարկ, աղբի համար 60լ	Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար, ծավալը 60 լ. տուփում 50 հատ	հատ	30	250	7500
5	24911700	Սոսինձ՝ սուպեր	Սոսինձ, սուպեր, արագ չորացող, 200 մլ-ոց տարաներով	կգ	6000	0.20	1200
6	24951130	Սիլիկոն /թափանցիկ, 360 մլ.	Սիլիկոն թափանցիկ, 360 մլ.-ոց տարաներով	կգ	3500	0.36	1260
7	24951130	Սիլիկոն /սպիտակ, 360 մլ.	Սիլիկոն սպիտակ, 360 մլ.-ոց տարաներով	կգ	3500	0.36	1260
8	30192210	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն մեծ	Սկոչ մեծ թափանցիկ, չափը 48մմx52մ	հատ	550	10	5500
9	30192220	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն փոքր	Սկոչ փոքր, թափանցիկ, չափը 19մմx30մ	հատ	120	30	3600
10	31211180	Ավտոմատ անջատիչներ 63Ա	Ավտոմատ ամջատիչ, 63 Ա	հատ	1500	2	3000
11	31211180	Ավտոմատ անջատիչներ 32Ա	Ավտոմատ անջատիչներ 32Ա	հատ	1000	2	2000
12	31211180	Անջատիչ	Անջատիչ պատի մեջի, մեկտեղանի	հատ	700	3	2100
13	31321190	Էլեկտրական լար ԱՊՊՎ 2x4մմ	Էլեկտրական լար բազմաժիլ, պղնձյա չափը՝ 2x4 մմ	մետր	480	25	12000
14	31321260	Էլեկտրական լար ԱՊՊՎ 2x2.5մմ	Էլեկտրական լար, բազմաժիլ, պղնձյա չափը՝ 2x2.5 մմ	մետր	350	25	8750
15	31321260	Էլեկտրական լար ԱՊՊՎ 2x1.5մմ	Էլեկտրական լար բազմաժիլ, պղնձյա չափը՝ 2x1.5 մմ	մետր	250	25	6250
16	31441000	Մարտկոց, AAA տեսակի	Մարտկոց, Extra Heavy Duty 24 G RO3 Size AAA 1.5 A	հատ	100	20	2000
17	31442000	Մարտկոց, AA տեսակի	Մարտկոց, Extra Heavy Duty 24 G RO3 Size AA 1.5 A	հատ	150	10	1500

18	31531300	Լեդ լամպ 15Վտ	Լեդ լամպ, 15 Վտ E27 (1 տարի երաշխիքով)	հատ	1800	50	90000
19	31531600	Լեդ լուսատուի լամպ 20 Վտ, 120 սմ	Լեդ լուսատուի լամպ, երկարությունը 120 սմ, հզորությունը 20Վտ, սպիտակ, նվազագույն լուսային հոսքը 1600 lumen	հատ	1500	50	75000
20	31531600	Լեդ լուսատուի լամպ 20 Վտ, 60 սմ	Լեդ լուսատուի լամպ, երկարությունը 60 սմ, հզորությունը 20Վտ, սպիտակ, նվազագույն լուսային հոսքը 1600 lumen	հատ	750	20	15000
21	31588100	Էլեկտրական վարդակ միաբևեռ, ներքին մոնտաժի հողանցումով	Վարդակ ներքին մոնտաժի հողանցումով, պատի մեջ ամրցվող, մեկտեղանի	հատ	750	4	3000
22	31588400	Էլեկտրական վարդակ միաբևեռ, բաց մոնտաժի հողանցումով	Վարդակ արտաքին հողանցումով, պատի վրա ամրացվող երկտեղանի	հատ	900	10	9000
23	31651400	Մեկուսիչ ժապավեն	Հոսանքի մեկուսացման համար, սև, կապույտ, սպիտակ, բարձր կպչունության (#102, 3/4x10)	հատ	200	10	2000
24	31683300	Վարդակի բաժանիչ	Վարդակի բաժանիչ, Makel 3	հատ	400	10	4000
25	31685000	Էլեկտրական երկարացման լար	Չափերը՝ 3տ 5 մ կամ 3տ 10 մ: 110 Ա, 250 Վ միացման մանրակներով:	հատ	3000	10	30000
26	31686000	Խրոց /5մմ	Էլեկտրական խրոց, (տրամագիծը՝ 5մմ), հաստ ոտքերով	հատ	400	10	4000
27	33141118	Անձեռոցիկ	Անձեռոցիկ, երկշերտ, տուփում 130-150 հատ, չափը՝ 23 x8.5 x11.5 սմ,	հատ	200	160	32000
28	33761100	Զուգարանի թուղթ	Զուգարանի թուղթ,երկշերտ փափուկ, առնվազն 30մ	հատ	200	1400	280000
29	33761600	Սրբիչ վաֆլե, բամբակյա	Սրբիչ ձեռքի, փափուկ կտորից, չափը՝ 40 x70 սմ	հատ	600	2	1200
30	39221490	Սպունգ	Սանիտարահիգիենիկ նշանակության, սինթետիկ, ուղղանկյուն, տարբեր գույների, չափը՝ 5 x10 սմ	հատ	200	30	6000
31	39221500	Կաթսաշփիչ	Կաթսաշփիչը նախատեսված է սպասքի, լվացարանի, գազօջախի ամենաուժեղ կեղտաբծերը հեռացնելու համար	հատ	150	12	1800
32	39224331	Դույլ	Դույլ պլաստմասե 10 լ-անոց, ամուր բռնակներով	հատ	1000	2	2000
33	39224341	Աղբարկղ պլաստմասե	Աղբաման փակ, պլաստմասե, ոտքի սեղմակով 5 լ.	հատ	1200	4	4800
34	39514200	Խոհանոցի սրբիչներ	Սրբիչ խոհանոցային եռաշերտ, 900թերթ, չափը՝ 23 x12.5, փաթույթի երկարությունը 11.25 սմ, տուփում 12 հատ	հատ	1000	12	12000
35	39811100	Օդի թարմացուցիչներ	Օդաթարմացուցիչ 300մլ , տարբեր հոտերով	հատ	500	25	12500
36	39812600	Մաքրող միջոց	Մաքրող միջոց,առնվազն 500 գրամ	հատ	550	20	11000

37	39812600	Մաքրող միջոց ապակու	Մաքրող միջոց ապակու համար, 500 մլ,-ոց տարաներով	հատ	450	12	5400
38	39831245	Օճառ, հեղուկ փոքր	Օճառ ձեռքի,250 մլ-ոց տարաներով	լիտր	1400	2	2800
39	39831245	Օճառ, հեղուկ մեծ	Օճառ ձեռքի, 5000 մլ-ոց տարաներով	լիտր	600	80	48000
40	39831247	Ախտահանող հեղուկ սանհանգույցի համար/ խտանյութ 1լ	Մաքրող միջոց սանհանգույցի համար, 1լ.-ոց տարաներով	լիտր	1400	6	8400
41	39831247	Ախտահանող հեղուկ սանհանգույցի համար/ խտանյութ 5լ	Ժավել սպիտակեցնող, ախտահանող նյութ 5 լ-անոց	լիտր	150	30	4500
42	39831273	Հատակի մաքրման նյութեր լամինատի փայլեցման համար	Մաքրող միջոց 5 լ.-ոց տարաներով, լամինատի փայլեցման համար	լիտր	1800	10	18000
43	39831278	Սպասք լվանալու հեղուկ 5լ.	Սպասք լվանալու հեղուկ, 5լ. Տարայով, նախատեսված աման լվանալու համար, շատ խիտ:	լիտր	600	10	6000
44	39831283	Հատակի լվացման լաթ	Հատակի մաքրման շոր, վատինե, չափը՝ 80 x100 սմ	հատ	800	10	8000
45	39836000	Ավել հատակի	Առնվազն 90 սմ երկարությամբ, խիտ	հատ	1300	6	7800
46	39836000	Ավել գոգաթիակի հետ	Գոգաթիակ ավելով, պլաստմասե ձողով,ուղիղ մակերեսով, ձողի երկարությունը 95 սմ, խորություն՝ 20սմ, լայնություն՝ 22 սմ	հատ	2000	3	6000
47	42131470	Ծորակի միջուկ /0,5 դույմ	Ծորակի միջուկ 0,5 դույմ, լատունից	հատ	800	5	4000
48	44163280	Լվացարանի սիֆոնի կոմպլեկտ	Լվացարանի սիֆոնի կոմպլեկտ, 1/2-40/50 պլաստմասե խողովակ	հատ	1800	3	5400
49	44411120	Ջրի ծորակ 1 փականով 0.5 դույմ, մեկտեղանի, լվացարանին ամրացվող	Ջրի ծորակ 1 փականով 0.5 դույմ, մեկտեղանի,խրոմապատ, չժանգոտվող մետաղից,լվացարանին ամրացվող	հատ	4500	3	13500
50	44411120	Ջրի ծորակ 2 փականով 0.5 դույմ, երկտեղանի, լվացարանին ամրացվող	Ջրի ծորակ 2 փականով 0.5 դույմ, երկտեղանի,խրոմապատ,չժանգոտվող մետաղից, լվացարանին ամրացվող	հատ	8000	1	8000
51	44411420	Փական՝ հետադարձ, D 50	Փական ջրի, 0.5 դույմ, պղնձյա,(վերջնամասերը ՝ մեկը՝ դրսից ռեզբայով, մյուսը՝ ներսից ռեզբայով)	հատ	3000	2	6000
52	44411740	Զուգարանակոնքի մեխանիզմ	Զուգարանակոնքի մեխանիզմ 0.5 դույմ, պլաստմասե	հատ	3500	2	7000
53	44411751	Պապլավոկ, կողքից	Պապլավոկ կողքից, հավաքածու կողքից,պլաստմասե,M1/2, առանց ճնշման	հատ	2800	3	8400

54	44411751	Պապլավոկ, տակից	Պապլավոկ տակից, հավաքածու տակից, պլաստմասե,M1/2, առանց ճնշման	հատ	2800	3	8400
55	44511100	Ձեռքի գործիք՝ Կտրող սկավառակ (բալգարկայի քար)	Կտրող սկավառակ, բալգարկայի քար՝մետաղ կտրելու համար, չափը՝ 180*3.0*22.23	հատ	1200	1	1200
56	44511200	Մետաղասղոց	Մետաղասղոց, չափը՝ 12x315մմ	հատ	300	2	600
57	44521100	Կախովի փական	Կախովի փական, երկարությունը 12-14 սմ	հատ	3500	3	10500
58	44521120	Դռան միջուկ /8 սմ	Դռան միջուկ, փայտա և եվրոդռան համար, երկարությունը 8 սմ	հատ	1500	4	6000
59	44521120	Դռան միջուկ /6 սմ	Դռան միջուկ, փայտա և եվրոդռան համար, երկարությունը 6 սմ	հատ	1300	2	2600
60	44521210	Փականների մասեր Եվրոպատուհանի բռնակ, ստանդարտ չափի	Եվրոպատուհանի բռնակ, ստանդարտ չափի	հատ	2500	2	5000
61	44521210	Փականների մասեր Եվրոդռան բռնակ, ստանդարտ չափի	Եվրոդռան բռնակ, ստանդարտ չափի	հատ	2500	1	2500
62	44531130	Պտուտակագամ Դյուբել պտուտակով	Դյուբել պտուտակով, երկարությունը 5 սմ, հաստությունը 4 մմ	հատ	10	100	1000
		Ընդամենը					894220

*Մատակարարումը կատարվելու է ըստ պատվիրատուի փաստացի պատվերների՝ պատվերի տրամադրման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում, մինչև 25.12.2020թ՝ ք. Երևան, Կ. Ուլնեցի 68 հասցե:

**Ապրանքները պետք է լինեն գործարանային փաթեթավորմամբ և մակնշմամբ, չօգտագործված:

ԳՆՈՐԴ

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական
և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
ՀՎՀ 163518012543
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն՝

_____ Ա.Աբրահամյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մոնտալ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, գ.Հովտաշատ,
Բաղրամյան փ. 85 տ
Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀ 1570027106870100
ՀՎՀՀ 04426977

Տնօրեն՝

_____ Ա. Հովսեփյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«01» «04» 2020 թ. կնքված N «ՆՍԾՏԻԿ-ՄԱԱՊՁԲ-20/3/1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին
			Ընդամենը
1	18421130	Ձեռնոց տնտեսական	5250
2	19211200	Բամբակյա կտոր	21000
3	19641000	Պոլիէթիլենային պարկ, աղբի համար 35լ	9750
4	19641000	Պոլիէթիլենային պարկ, աղբի համար 60լ	7500
5	24911700	Սոսինձ՝ սուպեր	1200
6	24951130	Սիլիկոն /թափանցիկ, 360 մլ.	1260
7	24951130	Սիլիկոն /սպիտակ, 360 մլ.	1260
8	30192210	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն մեծ	5500
9	30192220	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն փոքր	3600
10	31211180	Ավտոմատ անջատիչներ 63Ա	3000
11	31211180	Ավտոմատ անջատիչներ 32Ա	2000
12	31211180	Անջատիչ	2100
13	31321190	Էլեկտրական լար ԱՊՊՎ 2x4մմ	12000
14	31321260	Էլեկտրական լար ԱՊՊՎ 2x2.5մմ	8750
15	31321260	Էլեկտրական լար ԱՊՊՎ 2x1.5մմ	6250
16	31441000	Մարտկոց, AAA տեսակի	2000
17	31442000	Մարտկոց, AA տեսակի	1500
18	31531300	Լեդ լամպ 15Վտ	90000
19	31531600	Լեդ լուսատուի լամպ 20 Վտ, 120 սմ	75000
20	31531600	Լեդ լուսատուի լամպ 20 Վտ, 60 սմ	15000
21	31588100	Էլեկտրական վարդակ միաբևեռ, ներքին մոնտաժի հողանցումով	3000
22	31588400	Էլեկտրական վարդակ միաբևեռ, բաց մոնտաժի հողանցումով	9000
23	31651400	Մեկուսիչ ժապավեն	2000
24	31683300	Վարդակի բաժանիչ	4000
25	31685000	Էլեկտրական երկարացման լար	30000
26	31686000	Խրոց /5մմ	4000
27	33141118	Անձեռոցիկ	32000
28	33761100	Զուգարանի թուղթ	280000
29	33761600	Սրբիչ վաֆլե, բամբակյա	1200
30	39221490	Սպունգ	6000
31	39221500	Կաթսաշփիչ	1800
32	39224331	Դույլ	2000
33	39224341	Աղբարկղ պլաստմասե	4800
34	39514200	Խոհանոցի սրբիչներ	12000
35	39811100	Օդի թարմացուցիչներ	12500
36	39812600	Մաքրող միջոց	11000
37	39812600	Մաքրող միջոց ապակու	5400
38	39831245	Օճառ, հեղուկ փոքր	2800
39	39831245	Օճառ, հեղուկ մեծ	48000
40	39831247	Ախտահանող հեղուկ սանհանգույցի համար/ խտանյութ 1լ	8400

41	39831247	Ախտահանող հեղուկ սանհանգույցի համար/ խտանյութ 5լ	4500
42	39831273	Հատակի մաքրման նյութեր լամինատի փայլեցման համար	18000
43	39831278	Սպասք լվանալու հեղուկ 5լ.	6000
44	39831283	Հատակի լվացման լաթ	8000
45	39836000	Ավել հատակի	7800
46	39836000	Ավել գոգաթիակի հետ	6000
47	42131470	Ծորակի միջուկ /0,5 դույմ	4000
48	44163280	Լվացարանի սիֆոնի կոմպլեկտ	5400
49	44411120	Ջրի ծորակ 1 փականով 0.5 դույմ, մեկտեղանի, լվացարանին ամրացվող	13500
50	44411120	Ջրի ծորակ 2 փականով 0.5 դույմ, երկտեղանի, լվացարանին ամրացվող	8000
51	44411420	Փական՝ հետադարձ, D 50	6000
52	44411740	Ջուգարանակոնքի մեխանիզմ	7000
53	44411751	Պապլավոկ, կողքից	8400
54	44411751	Պապլավոկ, տակից	8400
55	44511100	Ձեռքի գործիք՝ Կտրող սկավառակ (բալգարկայի քար)	1200
56	44511200	Մետաղասղոց	600
57	44521100	Կախովի փական	10500
58	44521120	Դռան միջուկ /8 սմ	6000
59	44521120	Դռան միջուկ /6 սմ	2600
60	44521210	Փականների մասեր Եվրոպատուհանի բռնակ, ստանդարտ չափի	5000
61	44521210	Փականների մասեր Եվրոդռան բռնակ, ստանդարտ չափի	2500
62	44531130	Պտուտակագամ Դյուբել պտուտակով	1000

*Վճարումն իրականացվելու է ապրանքների փաստացի մատակարարումից հետո՝ երկկողմ ստորագրված հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 30 (երեսուն) բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ԳՆՈՐԴ

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական
և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
Հ\Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն՝

_____ Ա.Աբրահամյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մոնտալ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, գ.Հովտաշատ,
Բաղրամյան փ. 85 տ
Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ\Հ 1570027106870100
ՀՎՀՀ 04426977

Տնօրեն՝

_____ Ա. Հովսեփյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	Չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն